ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության փորձագետ Տաթևիկ Զաքարյանի

Ես՝ Տաթևիկ Զաքարյանս, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2025 թվականի փետրվարի 17-ից (սույն թվականի փետրվարի 14-ին կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն):

Սույն թվականի մայիսի 17-ից մինչև օգոստոսի 18-ը (օգոստոսի 14-ից 15-ը ներառյալ գտնվել եմ արձակուրդում), համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1) օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ համապատասխան գրությունների, տեղեկանքների պատրաստում և տրամադրում Ֆինանսների նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին,

2) հարկային վարչարարության մեթոդաբանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի մշակում, դրանց վերաբերյալ այլ մարմինների (այդ թվում՝ պետական), գործարար շրջանակների և նրանց շահերը պաշտպանող մասնագիտական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների ուսումնասիրում և դիրքորոշումների ձևավորում,

3) տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից հարկային վարչարարության մեթոդաբանության հետ առնչվող հարցերի վերաբերյալ դիրքորոշումների ձևավորում և սահմանված կարգով դրանց ընթացքի ապահովում,

4) իրականացել եմ հարկային վարչարարության մեթոդաբանության վերաբերող միջազգային փորձի ուսումնասիրություն և ներկայացրել առաջարկություններ,

5) հարկային վարչարարության ոլորտի անհրաժեշտ ուսումնասիրությունների (այդ թվում՝ միջազգային փորձի) և վերլուծությունների իրականացում,

6) այլ մարմինների կողմից մշակված՝ հարկային վարչարարության մեթոդաբանությանը վերաբերող իրավական ակտերի և օրենքների նախագծերի ուսումնասիրությունների իրականացում և դիրքորոշումների ձևավորում, որոնցից են՝

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի N 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,
- «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 10-ի N 938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը,
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,
- «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծեր,
- «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը,
- «Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը,
- «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետութ-յան հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին», «Քաղաքաշինության մասին օրենքում լրացում

կատարելու մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը:

7) Վարչության գործառույթներից բխող այլ ընթացիկ աշխատանքների իրականացում, մասնավորապես, տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացված առաջարկությունների, բարձրացված հարցերի վերաբերյալ դիրքորոշումների ձևավորում և սահմանված կարգով դրանց ընթացքի ապահովում:

Եկամուտների քաղաքականություն և
վարչարարության մեթոդաբանության
վարչության փորձագետ՝

Տաթևիկ Զաքարյան
19.08.2025թ.